

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/8**

**26 հուլիսի 2016թ.**

Քննարկվեց Ա/Ձ Տոլիկ Բաբայանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 20.06.2016թ. թիվ 327501/06 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Տոլիկ Բաբայանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Տոլիկ Բաբայանը հայտնում է, որ ունի փոքրիկ խանութ: 2016թ. փետրվար ամսին իր առողջական վիճակը վատթարացել է, որի հետևանքով նա դադարեցրել է գործունեությունը: Նա հայտնում է նաև, որ բոլոր հարկերն իր կողմից վճարվել են, սակայն առողջական վիճակի վատթարացման պատճառով չի ներկայացվել 1-ին կիսամյակի հաշվետվությունը: Արմավիրի մարզի 6-րդ բաժնից ստացել է նամակ, որի համաձայն պետք է վճարի տուգանք 20.000 դրամի չափով՝ հաշվետվությունը չներկայացնելու համար: Ա/Ձ Տոլիկ Բաբայանը կապնվել է նրանց հետ և տեղեկացրել է հաշվետվությունը չներկայացնելու պատճառների մասին՝ հայտնելով, որ հանդիսանում է պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ: Սակայն իրեն մերժել են՝ պատճառաբանելով, որ հաշմանդամության թղթերը տրված են 2005թ-ին, այն դեպքում, երբ հաշմանդամությունը տրված է անժամկետ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Տոլիկ Բաբայանը խնդրում է հարցին տալ լուծում և իրեն ազատել տուգանքի վճարումից:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1325/06 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 15.06.2016թ. թիվ 1325/06 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Տոլիկ Բաբայանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 20.06.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 327501/06 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Տոլիկ Բաբայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Շրջանառության հարկ վճարողները մինչև հաշվետու

ժամանակաշրջանին հաջորդող առաջին ամսվա 20-ը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սահմանած ձևով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում շրջանառության հարկի հաշվարկը»:

Տվյալ դեպքում Ա/Ձ Տոլիկ Բաբայանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը: Այսինքն՝ նրա կողմից թույլ է տրվել զանցանք, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ա/Ձ Տոլիկ Բաբայանի գանգատում, որպես վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, նշված է վերոգրյալ հաշվարկը ներկայացվելու ժամանակահատվածում առողջական վիճակի վատթարացման, ինչպես նաև 1-ին կարգի հաշմանդամ հանդիսանալու հանգամանքները:

Հանձնաժողովի համոզմամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշմանդամության կարգը տրվել է 2005թ-ին, ուստի սույն գործով որպես վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք կարող էր հիմք ընդունվել հաշվարկը ներկայացվելու ժամանակահատվածում Ա/Ձ Տոլիկ Բաբայանի առողջական վիճակի վատթարացման հանգամանքը: Սակայն նշված փաստարկը հիմնավորող որևէ ապացույց ներկայացված չէ (գործում առկա չէ):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 20.06.2016թ. թիվ 327501/06 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչա կան մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ